

Բանալի բառեր՝ Եվրոպական հարևանություն, Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, քաղաքական երկխոսություն, վիզաների ազատականացում, տնտեսական համագործակցություն, քաղաքական ուժերի դիրքորոշումներ:

ՅՏԴ 336:339:327

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԶԵՎՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

*Ատենախոսության թեմա՝
«Արևելյան գործընկերություն» ծրագրի գործառնան
համեմատական վերլուծություն Հայաստանի, Վրաստանի
և Մոլդովայի օրինակով*

Միեր ՀԱԿՈԲՅԱՆ
*ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի ասպիրանտ*

*Գիտական ղեկավար՝
Ալեքսանդր ՄԱՐԳԱՐՈՎ
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

2013թ. սեպտեմբերին Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի միջև գործող Մաքսային միությանը (ներկայումս Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)) միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) նախագահ Սերժ Սարգսյանի արած հայտարարությունն ու Վիլնյուսում «Արևելյան գործընկերության» (ԱԳ) երրորդ գագաթնաժողովին Եվրոպական Միության (ԵՄ) հետ Ատոցացման համաձայնագրի (ԱԱ) (ներառյալ հորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱԳ)) չստորագրումը կասկածի տակ դրեցին ՀՀ արտաքին քաղաքականության առանցքային սկզբունքը՝ փոխլրացումն ու բազմակողմանի քաղաքականությունը: Այնուամենայնիվ, Վիլնյուսում Ս. Սարգսյանը հայտնեց հայկական կողմի պատրաստակամությունը «ԵՄ-ի հետ ձևավորել այնպիսի գործուն կառուցակարգեր, որոնք մի կողմից արտացոլում են մեր (Հայաստանի - Մ.Հ.) սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերությունների խորքային բնույթը, մյուս կողմից՝ համատեղելի են համագործակցության այլ ձևաչափերի հետ»¹:

2015թ. ԵՄ-ն վերանայեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀԹ)², դրան հավելելով գործընկերակցության հետ հարաբերությունների տարբերակումն ու ճկունությունը: Հաշվի առնելով ԵՄ արտաքին քաղաքական այս փոփոխությունը, ինչպես նաև ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացման Հայաստանի պատրաստակամությունն ու նախկին առաջընթացը՝ 2015թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպական հանձնաժողովը ՀՀ-ի հետ բանակցություններ սկսեց մեկ այլ շրջանակային փաստաթղթի՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շուրջ՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ին միանալուց հետո Հայաստանի ստանձնած պարտավորություններին դրա համապատասխանությունը: Փաստաթղթի շուրջ բանակցությունները տևեցին 15 ամիս և ավարտվեցին 2017 թ. փետրվարին: Հարկ է նշել, որ ՀԸԳՀ-ի շուրջ բանակցություններն ավելի բարդ էին ու խճճված, քան նախկինում ԱՀ-ի շուրջ բանակցությունները, քանզի այս դեպքում Հայաստանը ԵՄ-ի հետ համագործակցության ավելի նեղ դաշտ ուներ՝ պայմանավորված ԵԱՏՄ-ի առջև ունեցած պարտավորություններով: Մասնավորապես՝ ի տարբերություն ԱՀ-ի՝ ՀԸԳՀ-ում չէր կարող ներառվել ԽՀԱԱԳ-ն, իսկ ԵՄ-ի հետ համագործակցության առանցքում սովորաբար առևտուրն ու տնտեսական զարգացումն են:

ՀԸԳՀ-ն ստորագրվեց 2017թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում՝ ԱԳ հիմնադրող գագաթնաժողովի ժամանակ, սակայն այն ուժի մեջ կանոնի բոլոր կողմերի հաստատումից հետո միայն³: Այս փաստաթուղթը փոխարինում է ԵՄ-Հայաստան 1999 թվականից գործող Գործընկերության և համագործակցության համաձայնագրին՝ Հայաստանը դարձնելով ԵԱՏՄ անդամ առաջին երկիրը, որը շրջանակային համաձայնագիր ստորագրեց ԵՄ-ի հետ: Միևնույն ժամանակ, այն դարձավ առաջին հաջողված օրինակը, երբ ԱԳ շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցությունն իրապես համապատասխանեցվեց տվյալ երկրի առանձնահատկություններին: ՀԸԳՀ-ի ստորագրմամբ, փաստորեն, ի ցույց դրվեց, որ ԵՄ-ի հետ համագործակցությունը պետք է կառուցվի ելնելով թիրախային երկրի շահերից ու հնարավորություններից, այլ ոչ թե ԵՄ-ի կողմից առաջարկվող պայմաններից: Այսպիսով Հայաստանը նաև դուրս եկավ ԱԳ, այսպես կոչված, «հետնապահների» շարքից՝ նախկին 3+3 բանաձևը փոխարինելով 3+1+2-ով⁴:

ՀԸԳՀ-ն Հայաստանին անհրաժեշտ էր նաև ԵՄ-ի հետ հարաբերությունների իրական մակարդակը պաշտոնապես ամրագրելու առումով, քանզի 1999 թվականից գործող ԳՀՀ-ն իրավականորեն պարտադրող փաստաթուղթ չէր և չէր

¹ «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության երրորդ գագաթնաժողովում», 29.11.2013, ՀՀ նախագահի պաշտոնական վեբ-կայք, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/11/29/President-Serzh-Sargsyan-at-the-third-Eastern-Partnership-summit-speech/>, մատչելի էր 01.03.2018:

² Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions “Review of the European Neighbourhood Policy,” JOIN(2015) 50 final, 18.11.2015, from http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf, մատչելի էր 01.03.2018.

³ Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, JOIN(2017) 37 final, 25.09.2017, from https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf, մատչելի էր 01.03.2018.


⁴ Մինչև ՀԸԳՀ-ի ստորագրումը ԱԳ երկրներից երեքը՝ Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, ստորագրել էին ԵՄ-ի հետ ԱՀ-ն, ևս երեքը՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, նման փաստաթուղթ չէին ստորագրել: ՀԸԳՀ-ն, երբեմն բնութագրվելով որպես «թույլ ասոցացում», ԵՄ-ի հետ համագործակցության խորության սպեկտրում Հայաստանին տվեց միջանկյալ կարգավիճակ:

ենթադրում լուրջ քաղաքական համագործակցություն երկու կողմերի միջև, մինչդեռ ՀՀԳՀ-ն ներուսակ է խթանել Եական փոփոխություններ՝ շտրկիվ պայմանականության նշանակալի մակարդակի: Բացի այդ, ՀՀԳՀ-ն իրապես հավասարակշռված փաստաթուղթ է, որում հաշվի են առնվում ոչ միայն ԵՄ-ի անկախիթերը գործընկեր պետությունից, այլև տարածաշրջանի աշխարհաքաղաքական դրությունը և դրանում տվյալ երկրի ապահով դիրքավորման կարևորությունը: Հարկ է նաև նշել, որ Ռուսաստանը ՀՀԳՀ-ն, ի տարբերություն ԱՀ-ի, չի ընկալում որպես ԵՄ-ի միջամտում ռուսական գերակա շահերի գոտու երկու պատճառով: Նախ, ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամակցությամբ Ռուսաստանն արդեն իսկ ապահովագրել է իր գերակա դիրքը Հայաստանում, և ՀՀԳՀ-ն կարող է միայն լրացնել Հայաստանի արտաքին քաղաքական ու տնտեսական օրակարգը՝ չհակասելով Ռ-ի շահերին: Երկրորդ, Հայաստան-ԵՄ հարաբերություններում առաջընթացը նպաստում է ԵԱՏՄ-ի հեղինակության բարձրացմանը՝ այն դարձնելով առավել բաց ու բազմաճյուղ:

ՀՀԳՀ-ում առանձնացվում են համագործակցության երեք հիմնական ուղղություններ՝ ա) քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, համագործակցություն արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում, բ) արդարադատություն, ազատություն և անվտանգություն, գ) տնտեսական համագործակցություն, դ) ոլորտային համագործակցություն, ե) առևտուր⁵: Սույն հոդվածում կներկայացվեն միայն քաղաքական երկխոսությանն ու տնտեսական համագործակցությանը (ներառյալ՝ առևտուրը) վերաբերող հատվածները:

Քաղաքական երկխոսության հատվածը գրեթե չի տարբերվում նախկին ԱՀ-ից, քանզի այն որևէ կերպ չի հակասում ԵԱՏՄ-ին, իսկ տեքստը հիմնականում իրավականորեն չպարտադրող, դեկլարատիվ ու ընդհանրական բնույթի է: Համաձայնագրի քաղաքական բաղադրիչը չեզոք ու պակաս հավակնոտ է նաև այն առումով, որ ի տարբերություն Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքված ԱՀ-ների՝ ՀՀԳՀ-ում որևէ ձևով չի նշվում Հայաստանի «Եվրոպական ձգտումների» (ԵՄ-ին հնարավոր անդամակցության) մասին: ԵՄ-ին անդամակցության հեռանկարի բացակայությունը սովորաբար դիտարկվում է որպես ԵՅԶ-ի գլխավոր թերություն, ինչը որոշ պետությունների կողմից կարող է մեկնաբանվել իբրև անբավարար փոխհատուցում ԵՄ-ին մոտարկման գործում իրենց կատարած աջխատանքի դիմաց: Այլ կերպ ասած՝ անդամակցության անհնարինությունը թուլացնում է ԱԳ-ի քաղաքական պայմանականությունը: Թեև Ազգային անվտանգության ռազմավարությամբ (ԱԱՌ) ԵՄ-ի հետ խորը համագործակցային հարաբերությունների հաստատումը համարվում է արտաքին քաղաքական գերակայություն⁶, Հայաստանը երբևէ բացեցիբաց չի հայտարարել ԵՄ-ին անդամակցելու ցանկության մասին, ուստի ԵՄ-ից անկախիթերն այս առումով մեծ չեն: Այնուամենայնիվ, քաղաքական երկխոսության հատվածում առկա է որոշակի պայմանականություն, քանզի նշվում է, որ քաղաքական արժեքների (Ժողովրդավարություն, լավ կառավարում, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, դատական իշխանության անկախություն և այլն) պահպանումն ու իրագործումը համաձայնագրի առանցքային տարրեր են, որոնց խախտումը կարող է հանգեցնել համաձայնագրի չեղարկման⁷: Այնուամենայնիվ, չնայած տեքստի իրավական ուժին՝ ԵՄ-ն հազվադեպ է այս դրույթը գործնականում կիրառել⁸:

ՀՀ-ԵՄ ապրանքաշրջանառությունը 2013-2016 թթ. (մլն եվրո)



Ներկայացված է ըստ հեղինակի՝ Եվրոպական հանձնաժողովի տվյալների վրա հիմնված հավաքագրման:

Արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում համագործակցությունը ևս Եական փոփոխություններ չի կրել ԵԱՏՄ-ին Հայաստանի մասնակցության արդյունքում: ՀՀԳՀ-ով նախատեսվում է առաջին անգամ Հայաստանի մասնակցությունը ԵՄ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊԶ) շրջանակներում իրականացվող առաքելություններին⁹, ինչը, զուգորդվելով նաև ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի առաքելություններին մասնակցությանը, կարող է նպաստել Հայաստանի անվտանգային ոլորտի բազմազանեցմանը: ՀՀԳՀ-ի միջոցով նախատեսվում է նաև ԵՄ-ի ընդլայնված ներգրավվածություն Էներգետիկ անվտանգության, բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, ռազմական կրթության, ճգնաժամային կառավարման, ահաբեկչության դեմ պայքարի, կիրթանվտանգության և այլ ոլորտներում: Այնուամենայնիվ, ԵՄ-ի գլխավոր թերությունը շարունակում է մնալ գործընկեր երկրներում գերակա անվտանգային խնդիրների կարգավորմանը նպաստող գործիքների բացակայությունը: Լեռնային Ղարաբաղի

⁵ Comprehensive and Enhanced Partnership Agreement...

⁶ «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն», ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ-կայք, http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf, մատչելի էր 01.03.2018:

⁷ Comprehensive and Enhanced Partnership Agreement..., p. 350-351.

⁸ Lester S., Mercurio B., Bartels L., Bilateral and Regional Trade Agreements: Commentary and Analysis, 2nd edition, Cambridge: Cambridge University Press, 2016, p. 327.

⁹ Comprehensive and Enhanced Partnership Agreement..., p. 350-351.

հակամարտության պարագայում ևս ԵՄ-ն չունի միջամտության կիրառելի գործիքակազմ, ուստի ԶԸԳ-ն բավարարվում է նշելով, որ ԵՄ-ն աջակցում և լրացնում է ԵԱԶԿ Միևակի խմբի համանախագահների ջանքերը հակամարտության կարգավորման գործում¹⁰:

Տնտեսական համագործակցության ու առևտրի հատվածները, ինչպես արդեն նշվել է, չեն ներառում ո՛չ ԽՉԱԱՀ և ո՛չ սովորական Ազատ առևտրի համաձայնագիր (ԱԱՀ), քանզի Հայաստանն արդեն իսկ ԱԱՀ-ի մեջ է ԵԱՏՄ անդամ պետությունների հետ: Այնուամենայնիվ, ԶԸԳ-ն ևս ներառում է եապես ընդլայնված տնտեսական համագործակցություն ԵՄ-ի հետ:

ԵՄ-ն Հայաստանի կարևոր տնտեսական գործընկերներից է. 2016 թ. տվյալներով¹¹, ՀՀ ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառության 23.6%-ն իրականացվել է հենց ԵՄ-ի հետ¹²: ՀՀ արտահանումները կազմել են 335 մլն եվրո, ներկրումները՝ 601 մլն¹³: Ընդ որում, 2013 թ. սկսած ներկրումները պակասել են 15.62%-ով, իսկ արտահանումներն՝ ավելացել 22.08%-ով: 2013-2016 թթ. ՀՀ-ԵՄ ապրանքաշրջանառության պատկերը ներկայացված է ստորև բերվող գծապատկերում:

ԶԸԳ-ի միջոցով Հայաստանը չի ազատվում մաքսատուրքերից: ԵՄ-ից ներկրումները ենթակա են ստանդարտ արտաքին ԵԱՏՄ-ի կողմից սահմանված արտաքին մաքսման՝ բացառությամբ 800 անուն ապրանքների, որոնց համար Հայաստանը մինչև 2022 թ. տարանցման ազատություն է ստացել¹⁴: Ինչ վերաբերում է դեպի ԵՄ արտահանումներին, ապա հայկական ապրանքները ևս ենթակա են մաքսման, սակայն ԶԸԳ-ի միջոցով Հայաստանը շարունակում է օգտվել «Արտոնությունների ընդհանրացված համակարգից» (GSP+), ինչը հնարավորություն է ընձեռում 6400 անուն ապրանք ԵՄ արտահանել նվազեցված մաքսատուրքերով¹⁵: Ընդ որում, GSP+ ռեժիմի միջոցով ԵՄ-ն կիրառում է որոշակի քաղաքական պայմանակալություն՝ Հայաստանից (ինչպես և ռեժիմից օգտվող բոլոր պետություններից) պահանջելով 27 միջազգային կոնվենցիաների իրագործում, որոնք վերաբերում են լավ կառավարման, մարդու իրավունքների, աշխատանքային ստանդարտների, բնապահպանության և այլ հարցերի¹⁶:

Նոր համաձայնագրով տնտեսական համագործակցության ամենահավակնոտ փոփոխությունը, թերևս ծառայությունների ոլորտն է: ԶԸԳ-ով նախատեսվում է փոխադարձ մուտք դեպի ծառայությունների շուկա, ինչպես նաև ԵՄ բազմաթիվ իրավական նորմերի տեղայնացում ՀՀ օրենսդրությունում:

ԶԸԳ-ի արդյունավետ իրագործման նպատակով նախատեսվում է 2017-2020 թթ. ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրել մինչև 160 մլն եվրո, որոնց բաշխումն իրականացվելու է՝ ըստ ստորև ներկայացվող աղյուսակի¹⁷:

2017-2020 թթ. ԵՄ-ի կողմից ՀՀ-ին տրամադրվելիք ֆինանսական օժանդակության բաշխումը

	Տոկոսային ցուցիչ երկկողմ տրամադրվող ընդհանուր հատկացումներից
Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ	35 %
Ինստիտուտների ամրապնդում և լավ կառավարում	15 %
Միակցվածություն, Էներգետիկ արդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն	15 %
Շարժունակություն և միջանկյալ շփումներ	15 %
Լրացուցիչ աջակցություն ունակությունների հզորացմանը /ինստիտուցիոնալ կառուցմանը և ռազմավարական հաղորդակցությանը	15 %
Լրացուցիչ աջակցություն քաղաքացիական հասարակության զարգացմանը	5 %

ԶԸԳ-ով նախատեսվում է նաև ԵՄ ընդհանուր օդային տարածքին Հայաստանի միանալու վերաբերյալ համաձայնագրի կնքում՝ նպատակ ունենալով խթանել զբոսաշրջությունը, ավելացնել աշխատատեղեր և այլն¹⁸:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ-ԵՄ նոր համաձայնագրի քաղաքական բաղադրիչը, չիակասելով ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից բխող պարտավորություններին, գրեթե չի տարբերվում նախկինում բանակցված ԱՀ-ից, մինչդեռ տնտեսական բաղադրիչը, չներառելով ԽՉԱԱՀ-ն, Հայաստանին հնարավորություն չի ընձեռում մուտք ունենալ ԵՄ ներքին շուկա և առևտուր անել առանց հավելյալ մաքսատուրքերի: Այնուամենայնիվ, համեմատ համագործակցության նախկին ծավալի՝ ԶԸԳ-ն էական փոփոխություններ է նախատեսում: Համաձայնագրի թույլ կողմը, թերևս, անվտանգության ոլորտում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում ԵՄ չափազանց պասիվ ներգրավվածությունն է, ինչը կարող է եապես թուլացնել ԵՄ քաղաքական պայմանակալությունը Հայաստանի նկատմամբ:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ 2017 թ. տվյալները դեռևս հրապարակված չեն:

¹² European Union, Trade in goods with Armenia, Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական վեբ-կայք, http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113345.pdf, մատչելի էր 01.03.2018: Նշենք, որ Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերը, որի հետ 2016 թ. իրականացվել է ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության 30.7%-ը:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>, մատչելի էր 01.03.2018:

¹⁵ Regulation (EU) No 978/2012 of the European Parliament and the Council of 25 October 2012 applying a scheme of generalised tariff preferences and repealing Council Regulation (EC) No 732/2008, Official Journal of the European Union, 2012, http://trade.ec.europa.eu/doclib/docs/2012/october/tradoc_150025.pdf, մատչելի էր 01.03.2018.

¹⁶ Report from the Commission to the European Parliament and the Council, Report on the Generalised Scheme of Preferences covering the period 2014-2015, SWD(2016) 8 final, 28.01.2016, from http://trade.ec.europa.eu/doclib/docs/2016/january/tradoc_154180.pdf, մատչելի էր 01.03.2018.

¹⁷ Տե՛ս Հայաստանում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք, https://eeas.europa.eu/delegations/armenia_en/896/Armenia%20and%20the%20EU, մատչելի էր 01.03.2018:

¹⁸ Comprehensive and Enhanced Partnership Agreement..., p. 44.

ՀՀ խորհրդարանական ուժերի մոտ առկա է ընդհանուր կոնսենսուս ՅԸԳԳ-ի շուրջ¹⁹: Այն ընկալվում է որպես կարևոր փաստաթուղթ ՀՀ-ԵՄ հարաբերությունների հետագա զարգացման համար, որը միաժամանակ չի խոչընդոտում ՌԴ-ի հետ համագործակցությանը և ճկունության հաշվին թույլ է տալիս շարունակել ՀՀ արտաքին քաղաքականությունում իրագործել փոխլրացման սկզբունքը: «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցության ներկայացուցիչներից մեկը գտնում է, որ ՅԸԳԳ-ի միջոցով «ԵՄ-ն արեց այն, ինչ կարող էր անել դեռևս 2013 թ., սակայն ժամանակային կորստով... իսկ Նոր համաձայնագիրը ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման վերջնակետը չէ, այլ մի հանգրվան, որից հետո կարող է ավելի խորը համագործակցություն լինել»²⁰: «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր, ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը գտնում է, որ ՅԸԳԳ-ն ընդամենը հաջողության բանալի է, որն անհրաժեշտ է խելամիտ օգտագործել: Ուստի համաձայնագրի արդյունավետ իրագործումը կախված է ՀՀ կառավարության քաղաքական կամքից և ԵՄ-ի կողմից տրված «տնային առաջադրանքի» կատարումից²¹: Այս կարծիքն է կիսում նաև «Ելք» խմբակցության պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արտակ Զեյնալյանը²²: ՀՅԴ խմբակցության ղեկավար, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արմեն Ռուստամյանը գտնում է, որ ՅԸԳԳ-ի ստորագրմամբ Նոր հնարավորություններ են բացվում Հայաստանի համար, քանզի դրանք առկա են արդեն երկու դաշտում (ԵՄ և ՌԴ), և դրանցից օգտվելը «լավ նախադրյալներ է ստեղծում երկրի առջև ծառայած խնդիրները լուծելու համար»²³:

Ամփոփելով կարող ենք կատարել մի քանի եզրակացություններ:

ԵԱՏՄ-ին միանալով և ԵՄ-ի հետ ՅԸԳԳ-ի ստորագրմամբ Հայաստանը թեև չստացավ ԵՄ-ի հետ ազատ առևտրի հնարավորություն, սակայն ճկուն արտաքին քաղաքականության շնորհիվ պահպանեց փոխլրացման սկզբունքը՝ համատեղելով երկու ինտեգրացիոն նախագծերը և խուսափելով ՌԴ-ԵՄ շահերի բախման կիզակետ լինելուց: Նոր համաձայնագիրը նաև երրորդ երկրների²⁴ հետ հարաբերություններում ԵՄ քաղաքականության ճկունության և ԱԳ տարբերակման սկզբունքի դրսևորում է: ՀՀ-ի հետ ԱՀ-ի ստորագրման անհնարինությունն ու Ուկրաինայում աշխարհաքաղաքական բախման հետևանքները ԵՄ-ին ստիպեցին Նոր մոտեցում որդեգրել ԱԳ տարածաշրջանի երկրների հանդեպ՝ չպահանջելով բացարձակ եվրոպականացում, այլ բավարարվելով սահմանափակ համագործակցությամբ:

ՅԸԳԳ-ն, լինելով հավակնոտ փաստաթուղթ, այնուամենայնիվ, չի կարող համարվել ՀՀ-ԵՄ համագործակցության սահման, այլ պարզապես «անցումային գործարք», որը կարող է առաջիկա մի քանի տարվա ընթացքում վերանայվել և ենթարկվել Եական փոփոխությունների: Մասնավորապես՝ կախված Հայաստանի կողմից փաստաթղթում ձևակերպված պահանջների կատարումից՝ պետք է խելամիտ ժամկետում (մինչև հինգ տարի) Հայաստանին առաջարկվի ՎԱԳԾ, քանզի այն նախնառաջ քաղաքական պայմանականության գործիք է, և կախված չէ տնտեսական առաջընթացից: Ուստի, այս առումով չպետք է տարբերություն դրվի ասոցացված երկրների և Հայաստանի միջև:

ՅԸԳԳ-ի միջոցով բացի երկրի քաղաքական, իրավական և տնտեսական համակարգերի արդիականացումից Հայաստանը կարող է զարգացնել պաշտպանական համակարգը ևս: ԵՄ ԸԱՊԶ-ի շրջանակներում իրականացվող առաքելություններին մասնակցությունը կարող է բարելավել ՀՀ զինված ուժերի տեխնիկական պատրաստականությունը: Չուզողովելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը ՀՀ անդամակցության և ՆԱՏՕ-ի առաքելություններին մասնակցության հետ՝ այն կարող փոխլրացման սկզբունքը արտաքին քաղաքականությունից տեղափոխել նաև անվտանգային հարթություն:

*Ներկայացվել է 23.01.2018թ.
Ընդունվել է սոպագրության 28.02.2018թ.*

¹⁹ Հաշվի առնելով 2018 թ. ՀՀ անցումը խորհրդարանական կառավարման համակարգի՝ խնդրի վերաբերյալ Ազգային ժողովի չորս խմբակցության ներկայացուցիչների դիրքորոշումը վերհանելու նպատակով հեղինակը խորին հարցազրույցներ է անցկացրել յուրաքանչյուր խմբակցության մեկ ներկայացուցչի հետ:

²⁰ Հարցազրույց ՀՀ ԱԺ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցության անանուն ներկայացուցիչի հետ, Երևան, 19.01.2018:

²¹ Հարցազրույց ՀՀ ԱԺ «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր, ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի հետ, Երևան, 27.11.2017:

²² Հարցազրույց ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության պատգամավոր, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արտակ Զեյնալյանի հետ, Երևան, 25.11.2017:

²³ Հարցազրույց «Հայ Ցեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ Արմեն Ռուստամյանի հետ, Երևան, 18.12.2017:

²⁴ Նկատի են առնվում ԵՄ-ին չանդամակցող բոլոր երկրները: